

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Բնական գիտություններ

2, 2005

Естественные науки

**Երկրաբանություն**

УДК 669.85/86; 669.88

**Մ. Կ. ԱՐԵՍԻԿՅԱՆ**

**ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՄԵՏԱՂՆԵՐԸ ՀՀ ՀԻԴՐՈՀԱՆՁԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

ՀՀ հանքահումքային ռեսուրսների և նրանց տեխնոլոգիական նյութերի համայիր ուսումնասիրությունը և օգտագործումը հանդիսանում է բարդ և բազմաբնույթ խնդիր, որն ունի կարևոր ժողովրդատեսական նշանակություն: Խոսքը վերաբերում է ոչ միայն արմատական հանքահումքային ռեսուրսներին, այլ նաև հանքապետության հիդրոհանքային հումքին, որը ծայրաստիճան քոյլ է ուսումնասիրված, սակայն նրանից օգտակար տարրերի էկոլոգիապես մաքուր և մատչելի արդյունահանման առումով ունի մեծ հեռանկարներ: Հանքապետության պղնձի, պղինձ-մոլիբդենային և ոսկի-բազմամետաղային արդյունաբերական ֆորմացիաների արմատական հանքավայրերում բավական ուսումնասիրված են հազվագյուտ մետաղների երկրաբիմիան և նրանց կորզման տեխնոլոգիական հնարավորությունները: Սակայն հանքապետության հանքահումքային պաշարներից հազվագյուտ մետաղների կորզումն իրականացվում է միայն հիմնական տարրերին (ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար, մոլիբդեն) զուգընթաց: Կուտակվելով նշված մետաղների խտանյութերում՝ նրանք հիմնականում օտարվում են (մասամբ վերամշակվում են պղնձի խտանյութերը, այն էլ մինչև սև պղինձ): Չնայած գոյություն ունի մաքուր մետաղների ստացման համաշխարհային փորձը և հանքապետությունում առկա են նորագույն տեխնոլոգիաների մշակումներ, այնուամենայնիվ հազվագյուտ մետաղների անմիջական ինքնուրույն արտադրաման ստեղծելու տեխնոլոգիական սխեմաներ չկան: Այդ իսկ պատճառով արմատական հանքավայրերում հազվագյուտ մետաղները դիտվում են որպես հարակից ելանյութեր, որոնք խտանյութերի մետալուրգիական վերամշակման ժամանակ մասամբ են կորզվում, նրանց արժեքն ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեջ չի մտնում, այդ պատճառով արտադրող ճեննարկությունները կրում են զգալի վնասներ:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հանքապետության տարածքում հայտնի հանքային և թերմալ (բարձր ջերմաստիճանային) հիդրոհանքային զգալի ռեսուրսները, որոնք պարունակում են մի շարք ուազմավարական նշանակություն ունեցող և միջազգային շուկայում

բարձր ու կայուն արժեք ներկայացնող հազվագյուտ մետաղները: Նախնական հետազոտությունները ցույց են տվել, որ՝ ի տարրերություն արմատական հանքավայրերի, հիդրոհանքային ռեսուրսների հիման վրա հնարավոր է ստեղծել այնպիսի հազվագյուտ մետաղների անմիջական արտադրություն, ինչպիսիք են գերմանիումը, բրու, ոուրիշիումը, լիթիումը, ցեզիումը, ստրոնցիումը և այլն:

Հեղինակային հաշվարկները [1-3] ցույց են տալիս, որ տարեկան տասնյակից հարյուրավոր տոննա գունավոր և մեծ պահանջարկ ունեցող հազվագյուտ մետաղներ հանքային և թերմալ ջրերի հետ դուրս են բերվում և աննպատակ կորչում: Հայաստանում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հրազդանի, Իջևանի, Սիսիանի, Դվինի, Հանքավանի, Ազատավանի մի շարք հանքավայրեր և թերմալ ջրեր, որոնցից համեմատաբար ուսումնասիրված են վերջին երկուսը: Անհրաժեշտ է նշել, որ Հանքավանի ջրերը տարեկան դուրս են բերում մակերես 56 տոննա բոր, 14 տոննա լիթիում, շուրջ մեկական տոննա ոուրիշիում, ցեզիում և զգալի քանակությամբ գերմանիում: Նշենք, որ համաշխարհային պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ արմատական հանքավայրերը կոնսերվացվել են և այդ քանակութեք տարրերը կորզվել են անմիջապես հանքային ջրերից և կոլոզիապես մաքուր և էժան տեխնոլոգիաների կիրառումով (օրինակ, լիթիումը, ԱՄՆ-ում՝ Սիլվեր Պիկ, Նևադայի մարզ, Չիլիում՝ Սալար-դե-Ատակամա, Բոլիվիայում՝ Սալար-դե-Ույունի) [4]: Լիթիումի և ավելի սահմանափակ քանակությամբ ոուրիշիումի և ցեզիումի արդյունաբերական հանույթ է կատարվում Չինաստանում, ճապոնիայում, Նոր Զելանդիայում, Խոտայիում, իսկ գիտահետազոտական աշխատանքներ են տարգում Ֆրանսիայում, Իսլանդիայում, Կանադայում, Չիլիում, Հնդկաստանում և այլուր:

Մեր հանքապետությունում որպես սորբենտներ հաճախ օգտագործվում են տարրեր քաղաքրակազմի ցեղիտներ, որոնց պաշարները հսկայական են, իսկ ինքնարժեքը՝ ցածր: Անհրաժեշտ է նշել, որ B-ի, Li-ի, Rb-ի, Cs-ի զգալի պաշարներ հիմնականում գտնվում են նորագույն հրաբխականության տարածման շրջաններում, ինչպիսիք են Ալպերը, Դինարիտները, Կարպատները և այլն, որոնց բվին է դասկում նաև Հայաստանը: Ցավոք սրտի, այս հանգամանքը լուրջ ուշադրության չի արժանացել և որոնողահետախուզական աշխատանքների ընթացքում շատ դեպքերում բարձր հանքայնացում ունեցող տարրեր ջերմաստիճանային ջրերի մետաղաբերության ուսումնասիրություններ ըստ խորության և ջերմաստիճանի փոփոխության չեն արվել և տարածման շրջանները չեն եղբագծվել: Կատարվել են միայն մակերևության հոսք ունեցող հիդրոբերմերի և նրանց բուժական հատկությունների ուսումնասիրություններ [5]:

Ուստասատանի ԳԱ երկրաբիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտի կողմից մշակվել են լիթիումի ցեզիումի և ոուրիշիումի կորզման տեխնոլոգիաներ (նույնիսկ 0,15մգ/լ միջին պարունակության ջրերից) [4], որոնք կիրառվել են Յակուտիայի և Ղազատանի հանքային ջրերի (120-130մգ/լ աղերի գումարային պարունակությամբ) ուսումնասիրության համար:

Հայաստանում նույնական կատարվել են որոշակի հետազոտություններ, որոնց նպատակն է եղել սորբեն տեխնոլոգիայի հիման վրա (ՓԼՀ-71 կատիոնիտի կիրառմամբ) իրականացնել ցեզիումի և ոուրիշիումի լիարժեք

կորզումը Հանքավանի ջրերից, որոնց պարունակությունները կազմել են համապատասխանաբար 0,68 և 0,4մգ/լ։ Բնական սորբենտների օգտագործումը հնարավորություն է տվել ապահովել հազվագյուտ մետաղների կորզումը 93,9–99,7%-ով [1]։ Նշենք, որ Ազատավանի հանքային ջրերում ցեղումի պարունակությունը կազմում է 3,52մգ/լ, ոութիշտումինը՝ 0,89, բռինը՝ 600, լիթումինը՝ 20մգ/լ։ Այդ հետազոտությունների տեխնիկատնտեսական հաշվարկները ցույց են տալիս, որ Հայաստանի ածխաթթվային հիդրոհանքային հումքից տեղական բնական ցեղիտները որպես սորբենտներ օգտագործելիս կարելի է ստանալ հազվագյուտ մետաղների (B, Li, Rb, Cs) կորզման բարձր ցուցանիշներ և ցածր ինքնարժեք։

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի հանքային ջրերը պիտանի են ոչ միայն բուժական նպատակների համար և սննդի արդյունաբերության ոլորտում, այլ նաև մի շարք արժեքավոր միկրոտարբերի կորզման առումով։

Ներկայումս ՀՀ հանքային և թերմալ ջրերի բաղադրակազմի մետաղական տարրերը շատ քիչ են ուսումնասիրված և կրում են տարերային բնույթ։ Հետազոտություններ կան Հանքավանի և Ազատավանի հանքավայրերի համար, որտեղ հայտնաբերված են ալկալային հազվագյուտ մետաղների զգալի կուտակումներ, մինչեւ այդ շրջանակներից դուրս են մնացել մեծածավալ պաշարներ ունեցող այնպիսի հանքային ջրեր, ինչպիսիք են Չերմուկի, Արգմու, Բջնիի, Դիլիջանի և այլ խմբերի հանքավայրերը։ Նրանց քիմիական կազմն ու բուժական հատկությունները բավական լավ ուսումնասիրված են և հիմք են հանդիսանում զանգվածային արտադրանքի՝ որպես սեղանի հանքային ջրի համար։ Հայաստանի հանքային և թերմալ ջրերի մետաղաբերության հետ կապված մանրակրկիտ և հետևողական ուսումնասիրություններ հանդապետությունում չեն կատարվել։ Իսկ ինչ վերաբերում է մետաղների կորզման տեխնոլոգիաների մշակմանը և մաքոր մետաղներ ստանալուն, ապա դրանք չեն կարող իրականացվել, քանի որ գոյություն չունի գիտարտադրական և նուրբ անալիտիկ բազա։ Անհրաժեշտ է նշել, որ հազվագյուտ մետաղների որոշ գիտական հետազոտություններ կատարվում են ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտում, ԵՊՀ-ում [1, 2], իսկ լեռնային շրջանների հանքագրերի ուսումնասիրություններ՝ Լեռնամետալուրգիայի ինստիտուտում [6], որոնք սակայն կրում են էկոլոգիական բնույթ, սահմանափակվում են հիմնականում ծանր մետաղների բանակական որոշմանք, սակայն չունեն տեխնոլոգիական ելք մաքոր մետաղների արտադրության համար։ Համաձայն [6]-ի՝ Զաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրից հանքագրերը դուրս են բերում տարեկան մինչև 12տ պղինձ, 60տ մոլիբդեն, մինչև 35կգ ոսկի, 120կգ արծաթ։ Ազարակի հանքավայրում այդ ցուցանիշներն ավելի նվազ են՝ տարեկան շուրջ 3,5տ մոլիբդեն, որը հիմնականում նստում է այդ ջրերով ոռոգվող այգիների հողաշերտերում։ Դաստակերտի հանքադաշտում, որտեղ դադարեցված են շահագործողական աշխատանքները, հանքագրերը տարեկան դուրս են բերում շուրջ մեկ տոննա մոլիբդեն, պղինձ, ցինկ և մկնդեղ, ինչը լուրջ վտանգ է ներկայացնում հողաշերտի հիպերգենեզի համար։ Զգալի քանակությամբ մետաղներ են դուրս բերվում պղինձ-ծծմբակուլեդանային հանքավայրերից։ Բավական է նշել, որ Ալավերդու հանքավայրից դուրս է բերվում 36տ պղինձ, Շամլուդի հանքավայրից՝ 8–10տ պղինձ, Տանձուտի հանքավայրից՝ 700տ

երկաք, 300–400մ ալյումին, ճառ պղինձ, ցինկ և այլ տարրեր, Ախրալայի հանքավայրից՝ 4տ պղինձ, 8տ ցինկ: Բացի դրանից, այդ հանքային շրջաններից դուրս են բերվում նաև մարդկանց և կենդանիների համար վտանգավոր տարրեր (մկնդեղ, սնդիկ), որոնց ուտիլիզացիան հանդիսանում է առաջնակարգ խնդիր, քանի որ դրանք աղտոտում են հողային շերտն ու մթնոլորտը խիտ քնակեցված հանքային շրջաններում: Այդպիսի Վտանգավոր գոտի է Ղափանի հանքային դաշտը, որտեղից (Ղափանի և Չահումյանի հանքավայրերից) դեպի Ողջի գետի ավազանն է հոսում հարյուրավոր տոննա պղինձ, ցինկ, երկաք, մանգան, մկնդեղ, ոսկի, արծաք, թելուր, սելեն և այլն, որոնց վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ակնհայտ է:

Սկզբունքային նշանակություն ունի Սևանի ավազանի հանքաջրերի բաղադրակազմի որոշումը և հարակից հանքայնացված գոտիներից դեպի Սևանա լճի քաղցրահամ ջրերը թափվող քունավոր տարրերի կանխումը: Համաձայն ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի տվյալների՝ Սևանի ավազանի հանքաջրերը պարունակում են հանքածին պղինձ, մոլիբդեն, ցինկ, մկնդեղ, սնդիկ, քրոմ, մանգան և ոսկու թելուրիդներ; պետրոգեն տարրերից՝ նիկել, կորալտ, մագնեզիում; տեխնոգեն ծագման՝ ֆոսֆոր, նիտրատներ, ֆոտոր, որոնք կապված են, ըստ երևույթին, ֆոտո-ապատիտային կազմի պարարտանյութերի հետ [1]:

Այսպիսով, խիստ հրատապ խնդիր է հանքապետության հիդրոհանքային ռեսուրսներում (թերմալ, հանքային ջրերում, հանքաջրերում, հանքահոսքաջրերում) հազվագյուտ մետաղների պարունակությունների գնահատումը, կորզումը՝ որպես լեռնահանքային արդյունաբերության լրացուցիչ հումք: Ի դեպ, այդպիսի հարցադրում արված է Է.Ս. Խալաթյանի աշխատանքներում [1, 2]:

Մեր առաջարկների շրջանակներն ավելի ընդգրկուն են և եապես լրացնում են նախկինում կատարված էկոլոգիական ուղղություն ունեցող հետազոտությունները, ունեն իրական հեռանկարներ, քանի որ ապահովում են հազվագյուտ տարրերի անմիջական կորզումը էկոլոգիապես մաքուր բարձրագույն տեխնոլոգիաներով, այդ բվում միկրոկենսաբանական տարրալուծմամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել թերմալ, հանքային ջրերի և հանքաջրերի տարրական և քիմիական կազմի երկարամյա նոնիտորինգ, որը հնարավորություն կտա բարձրորակ անալիտիկ հետազոտությունների հիման վրա դասակարգել առաջնահերթ հանքավայրերը և հանքային դաշտերը, որոնք կարող են հանդիսանալ հազվագյուտ մետաղների հիդրոհանքային հումքի աղբյուր:

Հանքահարստացուցիչ ֆարբիկաները, պոչամբարները և մետալուրգիական վերամշակման գործարանները՝ որոնք անհրաժեշտ են հանքային ֆորմացիաներից հազվագյուտ մետաղների կորզման համար, խիստ էներգատարողունակ են և մշտապես պահանջում են հսկայական էկոլոգիական ծախսեր: Մինչդեռ հիդրոհանքային հումքից նրանց կորզումը մեծածավալ կապիտալ ներդրումներ չի պահանջում, ինքնարժեքը խիստ ցածր է, նաև նպաստում է էկոլոգիապես մաքուր համակարգի պահպանմանը: Բավական է նշել, որ ալկալային հազվագյուտ մետաղների արժեքները՝ համաձայն «ALDRICH CHEMICAL CO»-ի տվյալների, կազմում են. ոութիղումինը՝ 1400, ցեզիումինը՝ 250, լիթիումինը՝ 600 դրամ/կգ և այլն:

Առաջատար երկրների տեխնոլոգիական ուսումնաժողովությունները ցույց են տալիս, որ հիդրոհանքային հումքից մետաղների կորզումը հասնում է 99,5%-ի, քանի որ այն իրականացվում է տեղային շարժական կայանքների միջոցով, որոնք չեն պահանջում խոշոր ֆունդամենտալ հիդրոտեխնիկական կառույցներ, օգտագործվում են մատչելի բարձրագույն տեխնոլոգիաներ:

Հետագա հետազոտությունների արդյունքում հնարավոր է ստեղծել էապես նոր տիպի հանքահումքային բազա, որը փոքրածավալ շարժական կայանքների օգտագործումով հնարավորություն կտա ստանալ ցածր ինքնարժեքով բանկարժեք հազվագյուտ, ինչպես նաև գունավոր սև մնացաղներ անհամեմատ բարձր շահավետությամբ՝ նպաստելով շրջապատի էկո-համակարգի բարելավմանը:

Ներկայում Հանրավանի և Ազատավանի ջրերում մասամբ ուսումնա-սիրված են համարփում ալկալային հազվագյուտ մետաղները և բորը: Այդ հանքային ջրերից սորբցիոն տարրալուծմանը, համաձայն տնտեսական հաշվարկի, տարեկան կարելի է ստանալ  $3,5\text{--}4,0$  մկն դոլար շահույթ, որը համագոր է Հայաստանի որոշ խոշոր լեռնահանքային ձեռնարկությունների տարեկան շահույթին [1, 2]:

**Եզրակացություն:** ՀՀ հիդրոհանքային ռեսուրսներից հազվագյուտ տարրերի կորզման նպատակով անհրաժեշտ է մշակել նպատակային կոնցեսուայ ծրագիր, որը կներառի հետևյալ փուլերը:

1. Հանրապետության զանգվածային արտադրության (Ձերմոկ, Արզնի, Հանքավան և այլն) հանքային ջրերում, ինչպես նաև նրանց հանքավայրերում և խոշոր լեռնահանքային շրջանների (Ղափան, Ալավերդի, Քաջարան) հոսքաջրերում անցկացնել բաղադրակազմի ժամանակակից մակարդակին համապատասխան մոնիթորինգ՝ հատկապես հազվագյուտ մետաղների համար:

2. Մշակել նորագոյն տեխնոլոգիաներ՝ հանքային ջրերից և հանքա-ջրերից հազվագյուտ մետաղների կորզման նպատակով, որոնք կապահովեն շրջակա միջավայրի պահպանումը վճասակար տարրերի աղտոտումից և հնարավորություն կտան հազվագյուտ մետաղների տեղային (լոկա) արտադրության շնորհիվ զարգացնել արդյունաբերության նոր ճյուղեր:

3. Ստեղծել բազային անալիտիկ տեխնոլոգիական կենտրոն հիմքուանքային հումքի վերամշակման համար, որը կապահովի տեղեկատվություն և հիմք կիանդիանա տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատ կառավարման միջոցով հանքային ջրերի, ինչպես նաև հանքաջրերի մասնաօիտավայած ռասակաղաքում հրականացնելու ըստ մետաղների:

## Հնդիանուր և կիրառական երևոառանության ամբիոն

Ստացվել է 11.05.2004

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Халатян Э.С., Арутюнова М.Н., Халатян Р.С. – Изв. АН Арм. ССР. Науки о земле, 1982, № 4.
  - Халатян Э.С., Арутюнова М.Н., Халатян Р.С. Извлечение редких металлов из терм. Армения. Сборник научных трудов Горно-металлургического института, 1999–2000, с. 68–73.

3. Аветисян В.А., Ананиян А.Л., Халатян Э.С. – Изв. АН Арм. ССР. Науки о земле, 1985, т. 38, № 6, с. 3–7.
4. Бойцов В.Е. и др. Месторождения благородных, радиоактивных и редких металлов. М.: Природа, 1999, 220 с.
5. Долуханова Н.И., Ананиян А.Л., Галстян А.Р., Крайнов С.Р. Геология Армянской ССР. Минеральные воды. Т. IX. Еր.: Изд-во АН Арм. ССР, 1969.
6. Никогосян О.С., Краевская С.Н. Вопросы использования отходов горной промышленности. Научные труды ГМИ, 2002, с. 260–264.

М. К. АРШАКЯН

## РЕДКИЕ МЕТАЛЛЫ В ГИДРОМИНЕРАЛЬНЫХ РЕСУРСАХ РА И ПЕРСПЕКТИВЫ ИХ ПРОМЫШЛЕННОГО ОСВОЕНИЯ

### Резюме

В статье в качестве дополнительной сырьевой базы редкометалльной промышленности рассматриваются гидроминеральные ресурсы республики. Обосновывается целесообразность промышленного извлечения редких металлов из термальных минеральных и рудничных вод за счет высокоэффективных экологически чистых технологических схем с низкой себестоимостью и без больших капитальных вложений.

M. K. ARSHAK YAN

## RARE METALS IN HYDROMINERAL RESOURCES OF ARMENIA AND PERSPECTIVES OF THEIR APPLICATION IN INDUSTRY

### Summary

Mineral water resources as additional source for rare metals industry have been discussed in the article. Recovery of rare metals out of thermal, mineral and mine waters with cost-effective ecologic technologies is the main purpose of the paper.